



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2023

Հունվար

02.2023

03.2023

04.2023

05.2023

06.2023

07.2023

08.2023

09.2023

10.2023

11.2023

12.2023

ՀՀ կենտրոնական բանկի
տեղեկագիր



ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2023

Հ ու ն վ ա ր

թիվ 1 (293)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- 4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՌԵԱԼ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին
- 4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԻԴՐԱՄ» ՍՊԸ ՎԿ «Արշակունյաց» մասնաճյուղը հաշվառումից հանելու մասին
- 4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 12Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին
- 5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 243-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 328-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1030-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
- 33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 247-Ն որոշումը «Հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»
- 36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 248-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»
- 41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 249-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 293-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
- 42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 4-Ն որոշումը ««Անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակը որպես ներդրումային ֆոնդի նպատակ գնահատելու չափանիշները» կանոնակարգ 10/33-ը սահմանելու մասին»

- 45 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 5-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 103-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»
- 48 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2022 թվականի չորրորդ եռամսյակ)»
- 49 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ**

- **Ուժը կորցրած է ճանաչվել** «ՌԵԱԼ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 3Ա):
- **Հաշվառումից հանվել է** «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Արշակունյաց» մասնաճյուղը (որոշում թիվ 10Ա):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2023 թ. հունվարի 31-ի թիվ 12Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լումբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 12.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 9.25%:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 328-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1030-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (համարել է որոշում)*

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառումը համապատասխանեցնելու ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 86-րդ հոդվածը, «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը,

ղեկավարելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիս 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 328-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 793-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1030-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ում (այսուհետ՝ Հավելված 1) և Հավելված 2-ում (այսուհետ՝ Հավելված 2) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հավելված 1-ում և Հավելված 2-ում.

ա. բոլոր «վաճառքի համար մատչելի» բառերը փոխարինել «իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» բառերով,

բ. բոլոր «վաճառքի համար մատչելի» բառերը փոխարինել «իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» բառերով,

* Ոչ պաշտոնական հրատարակություն:

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 27-ին, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2022 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 05.01. 2023):

գ. բոլոր «մինչև մարման ժամկետը պահվող» բառերը փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող» բառերով,

դ. բոլոր «Մինչև մարման ժամկետը պահվող» բառերը փոխարինել «Ամորտիզացված արժեքով հաշվառվող» բառերով:

2) Հավելված 1-ում՝ «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան» աղյուսակի.

ա. 102-րդ կետից 119-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

102	Ապագա ժամանակաշրջանի ծախսեր
1020	Ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսեր միջնորդավճարների գծով
1021	Ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման այլ ծախսեր
1022	Կարգավորման ծախսեր
1029	Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր
103	Ապահովագրության գծով կանխավճարային և այլ գումարներ
1030	Հատուցումների գծով կանխավճարային գումարներ
1039	Այլ կանխավճարներ ապահովագրության գծով
104	Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ
1040	Ստացվելիք ապահովագրավճարներ ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից
1041	Ստացվելիք ապահովագրավճարներ առևտրային կազմակերպություններից
1042	Ստացվելիք ապահովագրավճարներ ոչ առևտրային կազմակերպություններից
1043	Ապահովագրական ակտիվներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով
1044	Ապահովագրական ակտիվներ առևտրային կազմակերպությունների գծով
1045	Ապահովագրական ակտիվներ ոչ առևտրային կազմակերպությունների գծով
1046	Պայմանագրերի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ
105	Համաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ
1050	Ստացվելիք ապահովագրավճարներ ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից
1051	Ստացվելիք ապահովագրավճարներ առևտրային կազմակերպություններից
1052	Ստացվելիք ապահովագրավճարներ ոչ առևտրային կազմակերպություններից
1053	Ստացվելիք ապահովագրավճարներ համաապահովագրողներից
1054	Ապահովագրական ակտիվներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով
1055	Ապահովագրական ակտիվներ առևտրային կազմակերպությունների գծով
1056	Ապահովագրական ակտիվներ ոչ առևտրային կազմակերպությունների գծով
1059	Պայմանագրի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ
106	Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ակտիվներ
1060	Ստացվելիք վերաապահովագրավճարներ ապահովագրողներից
1061	Վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ
1069	Պայմանագրի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ
108	Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ
1080	Վերաապահովագրողի մասնաբաժինը չվաստակած ապահովագրավճարների պահուստում հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով
1081	Գնահատված հատուցումների գծով գումարներ
1082	Ստացվելիք պարգևավճարներ վերաապահովագրողներից

1083	Կանխավճարներ վերաապահովագրողներին
1084	Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ
1085	Վերաապահովագրության պայմանագրային ծառայությունների մարժա
1085	Վերաապահովագրողի մասնաբաժինը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում
1087	Վերաապահովագրողի մասնաբաժինը տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում
1088	Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ
1089	Պայմանագրի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ
110	Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ
1100	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներից
1101	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ առևտրային կազմակերպություն ապահովադիրներից
1102	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ ոչ առևտրային կազմակերպություն ապահովադիրներից
1103	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ ապահովագրողներից
111	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր և վերաապահովագրության, Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
1110	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր
1111	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
1112	Ուղղակի մասնակցության հատկանիշներով վերաապահովագրության պայմանագրեր
1113	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
1114	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ
1115	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ
119	Հնարավոր կորուստների պահուստներ
1190	Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1191	Վերաապահովագրության գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստ
1192	Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների պահուստ

»,

բ. 30-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

30	Ապահովագրության գծով պարտավորություններ	
	300	Ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ
	3000	Չվաստակած ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների մեթոդով հաշվարկված
	3001	Գնահատված հատուցումների գծով պարտավորություն
	3002	Գնահատված կարգավորման ծախսեր
	3003	Ապահովագրության պայմանագրերի գծով ձեռքբերման ծախսեր
	3004	Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ

	3005	Պայմանագրերի կատարման գծով այլ դրամական հոսքեր
	3006	Պայմանագրային ծառայությունների մարժա
	3007	Ռիսկի ճշգրտում
	301	Համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ
	3010	Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվարկված
	3011	Գնահատված հատուցումների գծով պարտավորություն
	3012	Գնահատված կարգավորման ծախսեր
	3013	Համաապահովագրության պայմանագրերի գծով ձեռքբերման ծախսեր
	3014	Փոխանցվելիք ապահովագրավճարներ համաապահովագրողներին
	3015	Համաապահովագրական պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ ապահովադիրներին
	3016	Պայմանագրերի կատարման գծով այլ դրամական հոսքեր
	3017	Պայմանագրային ծառայությունների մարժա
	3018	Ռիսկի ճշգրտում
	302	Վերաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ
	3020	Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների մեթոդով հաշվարկված
	3021	Գնահատված հատուցումների գծով պարտավորություն
	3022	Վճարվելիք պարգևավճարներ ապահովագրողներին
	3023	Գնահատված կարգավորման ծախսեր
	3024	Վերաապահովագրության պայմանագրերի գծով ձեռքբերման ծախսեր
	3025	Ապահովագրողներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ
	3026	Ստացված կանխավճարներ ապահովագրողներից
	3027	Պայմանագրերի կատարման գծով այլ դրամական հոսքեր
	3028	Պայմանագրային ծառայությունների մարժա
	3029	Ռիսկի ճշգրտում
	303	Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ
	3030	Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով
	3031	Փոխանցվելիք վերաապահովագրավճարներ վերաապահովագրողներին
	3032	Վճարվելիք միջնորդավճարներ միջնորդներին
	3033	Պայմանագրային ծառայությունների մարժա
	3039	Պայմանագրերի կատարման գծով վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարներ
	305	Կրած պահանջներ ուղղակի ապահովագրության գծով
	3050	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ
	3051	Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ
	3052	Վճարվելիք հատուցումներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին
	3053	Վճարվելիք հատուցումներ առևտրային կազմակերպություններին
	3054	Վճարվելիք հատուցումներ ոչ առևտրային կազմակերպություններին
	3055	Հատուցումների գծով կանխավճարային գումարներ
	3056	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ
	3059	Վճարվելիք այլ գումարներ կրած պահանջների գծով

	306	Կրած պահանջներ ուղիղ հատուցումների գծով
	3060	Վճարվելիք գումարներ ապահովագրական ընկերություններին ուղիղ հատուցումների գծով
	3061	Վճարվելիք գումարներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին ուղիղ հատուցումների գծով
	3062	Վճարվելիք գումարներ առևտրային կազմակերպություններին ուղիղ հատուցումների գծով
	3063	Վճարվելիք գումարներ ոչ առևտրային կազմակերպություններին ուղիղ հատուցումների գծով
	3064	Ստացվելիք գումարներ ապահովագրական ընկերություններից ուղիղ հատուցումների գծով
	307	Կրած պահանջներ համաապահովագրության գծով
	3070	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ
	3071	Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ
	3072	Համաապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք հատուցումներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին
	3073	Համաապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք հատուցումներ առևտրային կազմակերպություններին
	3074	Համաապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք հատուցումներ ոչ առևտրային կազմակերպություններին
	3075	Հատուցումների գծով կանխավճարային գումարներ
	3076	Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարներ կրած պահանջների գծով
	3077	Հատուցումների գծով վճարվելիք գումարներ համաապահովագրողներին
	3078	Հատուցումների գծով պահանջներ համաապահովագրողների նկատմամբ
	308	Կրած պահանջներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով
	3080	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ
	3081	Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ
	3082	Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ կրած պահանջների գծով
	3083	Հատուցումների գծով կանխավճարային գումարներ
	3084	Վճարվելիք այլ գումարներ կրած պահանջների գծով
	309	Այլ պահուստներ
	3090	Այլ պահուստներ

»,

գ. լրացնել «Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ» վերնագրով 31-րդ բաժնով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

31	Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ
310	Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ
3100	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներին
3101	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ առևտրային կազմակերպություն ապահովադիրներին

	3102	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ ոչ առևտրային կազմակերպություն ապահովադիրներին
	3103	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ ապահովագրողներին
	311	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր, Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
	3110	Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր
	3111	Առևտրային կազմակերպություն ապահովադիրների հետ կնքված ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր
	3112	Ոչ առևտրային կազմակերպություն ապահովադիրների հետ կնքված ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր
	3113	Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
	3114	Առևտրային կազմակերպություն ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
	3115	Ոչ առևտրային կազմակերպություն ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
	3116	Ուղղակի մասնակցության հատկանիշներով վերաապահովագրության պայմանագրեր
	3117	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ
	3118	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքներ և ոչ ապահովագրական ծառայություններ
	3119	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքներ և ոչ ապահովագրական ծառայություններ
	312	Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր
	3120	Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերի գծով պարտավորություններ

»,

դ. 36 «Տեխնիկական պահուստներ» բաժինը ուժը կորցրած ճանաչել,

ե. 540 «Այլ համապարփակ եկամուտ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5407 ենթակետով.

«

	5407	Ապահովագրության, համաապահովագրության, վերաապահովագրության պայմանագրերի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ճշգրտման գծով օգուտներ և վնասներ
--	------	---

»,

զ. 60 «Եկամուտներ ապահովագրական գործունեության գծով» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

60	Եկամուտներ ապահովագրական գործունեության գծով	
600	Եկամուտներ ուղղակի ապահովագրության գծով	
6000	Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներ	

601	Եկամուտներ համաապահովագրության գծով
6010	Համաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներ
6011	Համաապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ
602	Եկամուտներ վերաապահովագրության գծով
6020	Վերաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներ
6021	Վերաապահովագրողներից ստացվելիք պարգևավճարների գծով եկամուտներ
6022	Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով եկամուտներ
603	Եկամուտներ սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով
6030	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներից եկամուտներ
604	Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով
6040	Ապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի դրական վերագնահատումից եկամուտներ
6041	Վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի դրական վերագնահատումից եկամուտներ
605	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով եկամուտներ
6050	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի վերագնահատումից եկամուտներ
6051	Ապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքի դրական վերագնահատումից եկամուտներ
6052	Ուղղակի մասնակցության հատկանիշներով վերաապահովագրության պայմանագրերի վերագնահատումից եկամուտներ
6053	Վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքի դրական վերագնահատումից եկամուտներ
6054	Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով եկամուտներ
6055	Վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով եկամուտներ
606	Վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտներ
6060	Զվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ
6061	Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ
6062	Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստից վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ
6069	Այլ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ
607	Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ
6070	Եկամուտներ ապահովագրության գծով
6071	Եկամուտներ վերաապահովագրության գծով
6079	Այլ եկամուտներ

608	Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ, Անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ
6080	Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ
6081	Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ
6082	Անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ
6083	Վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ
6084	Ապահովագրության ծառայությունների գծով այլ եկամուտներ
609	Այլ եկամուտներ ապահովագրական գործունեության գծով
6090	Այլ եկամուտներ
6091	Եկամուտներ ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում

»,

է. 64 «Եկամուտներ տեխնիկական պահուստների գծով» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

64	Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից
640	Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից
6400	Եկամուտներ չվաստակաձ ապահովագրավճարների պահուստի հակադարձումից
6401	Եկամուտներ ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի հակադարձումից
6402	Եկամուտներ տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի հակադարձումից
6409	Եկամուտներ տեխնիկական այլ պահուստների հակադարձումից

»,

ը. 703-708–րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

703	Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք և փոխանցվելիք գումարների գծով ծախսեր
7030	Վերաապահովագրության ձեռքբերումից զուտ կորուստներ
7031	Վերաապահովագրողներին փոխանցվելիք վերաապահովագրավճարների գծով ծախսեր
7032	Վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով միջնորդներին վճարվելիք միջնորդավճարների գծով ծախսեր
7039	Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարների գծով ծախսեր
704	Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի, նրանց բաղադրիչների գծով կորուստներ
7040	Ապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով կորուստներ
7041	Վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով կորուստներ
705	Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով կորուստներ
7050	Ապահովագրական պայմանագրերի գծով կորուստներ
7051	Վերաապահովագրական պայմանագրերի գծով կորուստներ

7052	Ապահովագրական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների գծով կորուստներ
7053	Վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների գծով կորուստներ
706	Վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսեր
7060	Չվաստակաձև ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
7061	Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի նվազեցման գծով ծախսեր
7062	Պայմանագրային ծառայությունների մարժայի նվազեցման գծով ծախսեր
7063	Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստում վերաապահովագրողի նվազեցման հակադարձման գծով ծախսեր
7064	Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստից վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
7065	Այլ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
707	Ապագա ժամանակաշրջանի ծախսեր
7070	Ապագա ժամանակաշրջանի ծախսեր
708	Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր
7080	Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր
7081	Ապահովագրության գծով ֆինանսական ծախսեր
7082	Անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ
7083	Վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր
7084	Ապահովագրության ծառայությունների գծով այլ ծախսեր

»,

թ. 71 «Տեխնիկական պահուստների ձևավորման հետ կապված ծախսեր» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

71	Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր	
	710	Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր
	7100	Չվաստակաձև ապահովագրավճարների պահուստի ձևավորման ծախսեր
	7101	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր
	7102	Տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր
	7109	Այլ տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր

»,

3) Հավելված 2-ի՝

ա. Բաժին 10-11-ի նկարագրության վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բաժնում պարունակվող հաշիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտ այսուհետ՝ (ՖՀՄՍ) 17 և ՖՀՄՍ 9 ստանդարտներով:»,

բ. բոլոր «ՀՀՄՍ 39» բառերը փոխարինել «ՖՀՄՍ 9» բառով,

գ. 102-111-րդ ենթաբաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 102
«Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»

Այս ենթաբաժինը օգտագործվում է ապահովագրական պայմանագրերի գծով կատարված ծախսերի հետաձգման համար:

1020 «Ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսեր միջնորդավճարների գծով» - այս հաշվում կուտակվում և արտացոլվում են միջնորդներին վճարվող գումարները, որոնք ծախսվում են ապահովագրական պայմանագրի ստեղծման համար մինչև ապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչվելը:

Հաշիվը դեբետագրվում է կատարված ծախսի չափով՝

Դտ- 1020,

Կտ- Դրամական միջոց:

Հաշիվը կրեդիտագրվում է, երբ ապահովագրական պայմանագրերի խումբը ճանաչվում է որպես պարտավորություն՝ կատարված ծախսի չափով՝

Դտ- 3000/3001/ 3011/ 3021

Կտ- 1020

Երբ պայմանագրերի խումբը ճանաչվում է որպես ակտիվ, ապա տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1043/1044/1045

Կտ – 1020:

1022 «Կարգավորման ծախսեր» - այս հաշվում արտացոլվում են կարգավորման ծախսերի գծով կանխավճարները, մինչև ապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչումը:

Հաշիվը դեբետագրվում է կատարված ծախսի չափով՝

Դտ- 1022

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է ապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչման պահին

Դտ- 3002/3012/3023

Կտ- 1022:

Ենթաբաժին 103
«Ապահովագրության գծով կանխավճարային և այլ գումարներ»

1030 «Հատուցումների գծով կանխավճարային գումարներ» - այս հաշվում արտացոլվում են ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցման (ներառյալ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցման) համար վճարված գումարները (կանխավճարային գումարներ) այն դեպքում, երբ տվյալ ապահովագրական պայմանագրերի խումբը դեռ չի ճանաչվել:

Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ՝ 1020 հաշվինը:

Ենթաբաժին 104
«Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի ապահովագրական գործունեության գծով ակտիվների/ստացվելիք գումարների հաշվառման համար:

1040 «Ստացվելիք ապահովագրավճարներ ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից» հաշիվը հաշվառվում է ՖՀՄՍ 17-ով սահմանված ընդհանուր չափման մոդելի (հիմնական մոտեցման) կիրառման ժամանակ ստացվելիք ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 300 բաժնի համապատասխան հաշիվների հետ: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով Դրամական միջոցների հետ:

1041,1042 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ՝ 1040 հաշվինը:

1043 «Ապահովագրական ակտիվներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով» - հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվառում իրականացնելիս: Հաշիվը դեբետագրվում է ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներից վաստակած ապահովագրավճարների գումարով և կրեդիտագրվում է դրանց վճարման դեպքում:

Վաստակած ապահովագրավճարների գումարով՝

Դտ-1043

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Ապահովագրավճարների ստացման դեպքում՝

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ- 1043:

1044,1045 հաշիվները լրացվում են նույն սկզբունքով, ինչ՝ 1043 հաշիվը:

Ենթաբաժին 105

«Համաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության գծով ակտիվների և ստացվելիք այլ գումարների հաշվառման համար: Սույն ենթաբաժնում ներառվող հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ՝ 104 ենթաբաժնի հաշիվներինը:

Ենթաբաժին 106

«Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ակտիվներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ակտիվների հաշվառման համար: Հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ՝ 104 ենթաբաժնի հաշիվներինը:

Ենթաբաժին 108

«Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ»

1080 «Վերաապահովագրողի մասնաբաժինը չվաստակած ապահովագրավճարների պահուստում հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով» - այս հաշիվը նախատեսված է չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի արտացոլման համար ՖՀՄՍ 17-ով նկարագրված ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվառում իրականացնելիս: Հաշիվը դեբետագրվում է վճարված վերաապահովագրավճարի չափով՝ թղթակցելով դրամական միջոցների հետ: Հաշիվը կրեդիտագրվում է ճանաչված ծախսի չափով՝ թղթակցելով ծախսային հաշվի հետ:

1081 «Գնահատված հատուցումների գծով գումարներ» հաշվում հաշվառվում են վերաապահովագրության պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերը՝ ՖՀՄՍ 17-ով սահմանված ձևով

հաշվարկված: Հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված ընդհանուր չափման մեթոդով հաշվառումը (հիմնական մոտեցում) կիրառելիս: Հաշիվները դեբետագրվում են դրամական հոսքերի գնահատված գումարի չափով՝ թղթակցելով դրամական միջոցների հետ դրանց վճարման դեպքում կամ 303 ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ: Հաշիվը կրեդիտագրվում է ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 1086 «Վերաապահովագրողի մասնաբաժինը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում» հաշվի հետ, վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ» հաշվի հետ:

1082 «Ստացվելիք պարգևավճարներ վերաապահովագրողներից»- հաշվում դեբետագրվում են վերաապահովագրողներից ստացվելիք պարգևավճարները՝ կրեդիտագրելով համապատասխան եկամտային հաշվին, եթե պայմանագրերի խմբի գծով առկա չէ պարտավորություն վերաապահովագրավճարների գծով:

1083 «Կանխավճարներ վերաապահովագրողներին» - հաշվում դեբետագրվում են վերաապահովագրողներին տրված կանխավճարները՝ կրեդիտագրելով դրամական միջոցների հաշիվները:

1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ»- հաշիվը դեբետագրվում է դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարների չափով՝ կրեդիտագրելով համապատասխանաբար 1080 «Վերաապահովագրողի մասնաբաժինը չվաստակած ապահովագրավճարների պահուստում հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով», 1081 «Գնահատված հատուցումների գծով գումարներ», 1085 «Վերաապահովագրության պայմանագրային ծառայությունների մարժա» և 1089 «Պայմանագրի կատարման գծով ստացվելիք այլ գումարներ» հաշիվների հետ:

1085 «Վերաապահովագրության պայմանագրային ծառայությունների մարժա» հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է վերաապահովագրության պայմանագրերի գծով չճանաչված ծախսը արտացոլելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է ճանաչված ծախսի չափով՝ թղթակցելով համապատասխան ծախսային հաշվի հետ և վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 1084 «Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ» հաշվի հետ: Հաշիվը դեբետագրվում է պայմանագրերով նախատեսված վերաապահովագրավճարների և պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի տարբերության չափով:

1088 «Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ» - հաշիվը դեբետագրվում է վերաապահովագրողների նկատմամբ հատուցումների գծով պահանջի չափով՝ կրեդիտագրելով 1086 «Վերաապահովագրողի մասնաբաժինը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում» հաշվի հետ ճշգրտումները համապատասխան եկամտային կամ ծախսային հաշիվների հետ:

Ենթաբաժին 110

«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության պայմանագրերում պարունակվող ՖՀՄՍ 17-ի համաձայն առանձնացված ներդրումային բաղադրիչների հաշվառման համար: Ընդ որում, ներդրումային բաղադրիչի հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն:

1100 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով ստացվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներից» -

այս հաշվում արտացոլվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն ապահովագրական պայմանագրերից առանձնացված ներդրումային բաղադրիչը՝ հետևյալ ձևակերպումներով.

Դտ- 1100

Կտ- Դրամական միջոցներ:

Ներդրումային բաղադրիչի հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝

Դտ- 1100

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,

կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 1100՝

Էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված եկամտի չափով՝ համապատասխանաբար դրական կամ բացասական մեծության դեպքում:

1101 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 1100 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժին 111

«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրեր, ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի մասնակցության հատկանիշներով պայմանագրերի և պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

1110 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր» - այս հաշիվը նախատեսված է այն ապահովագրության պայմանագրերի համար, որոնք պարունակում են ուղղակի մասնակցության հատկանիշներ՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրության պայմանագրերի վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1110

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,

կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 1110՝

համապատասխանաբար դրական կամ բացասական վերագնահատման դեպքում:

1111 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների առանձնացված հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքի մեծության վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1111

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ,

կամ

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 1111՝

համապատասխանաբար դրական կամ բացասական վերագնահատման դեպքում:

1112 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 1110 հաշվի հաշվառումը:

1114 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ» հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով ստացվելիք գումարների արտացոլման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 15-ի 7-րդ պարագրաֆի համաձայն:»:

դ. 30-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ԲԱԺԻՆ 30

«Ապահովագրության գծով պարտավորություններ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. **300 «Ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»**, **301 «Համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»**, **302 «Վերաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»**, **303 «Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ»**, **305 «Կրած պահանջներ ուղղակի ապահովագրության գծով**, **306 «Կրած պահանջներ ուղիղ հատուցումների գծով»**, **307 «Կրած պահանջներ համաապահովագրության գծով»**, **308 «Կրած պահանջներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով»**, **309 «Այլ պահուստներ»:**

Ենթաբաժին 300

«Ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի ապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունները հաշվառելու համար:

3000 «Զվաստակած ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների մեթոդով հաշվարկված» հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվառում իրականացնելիս: Հաշիվը կրեդիտագրվում է ստացված ապահովագրավճարի չափով՝ թղթակցելով դրամական միջոցների հետ.

Դտ- դրամական միջոցներ

Կտ- 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ 3000 հաշիվը դեբետագրվում է կատարված ձեռքբերման ծախսի չափով՝ թղթակցելով 1020 կամ 1021 հաշիվների հետ:

Ձեռքբերման ծախսերի ամորտիզացիայի համար հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով 7080 ծախսային հաշվի հետ:

3000 հաշիվը դեբետագրվում է նաև վաստակած եկամտի չափով՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշվի հետ:

3001-3004 հաշիվները հանդիսանում են ՖՀՄՍ 17-ով սահմանված պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքեր: Փողի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ազդեցությունը արտացոլելու համար հաշիվները դեբետագրվում և կրեդիտագրվում են՝ թղթակցելով ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների և ծախսերի՝ 6081 և 7081 հաշիվների հետ:

3001-3004 հաշիվները դեբետագրվում և կրեդիտագրվում են նաև անբարենպաստ պայմանագրերի դեպքում պայմանագրերի կատարման գծով դրամական արտահոսքերի և ներհոսքերի տարբերության չափով:

3001 «Գնահատված հատուցումների գծով պարտավորություն» հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի խմբի հատուցումների գծով գնահատված դրամական արտահոսքերը հաշվառելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է պայմանագրերի ճանաչման ժամանակ գնահատված գումարի մեծությամբ՝ թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ: Հաշիվը դեբետագրվում է ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ» հաշվի հետ, պայմանագրերի դադարեցման դեպքում պարտավորության նվազման չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ:

3002 «Գնահատված կարգավորման ծախսեր» հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով գնահատված կարգավորման ծախսերի հաշվառման համար: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ և դեբետագրվում 1022 հաշվի հետ՝ մինչև ապահովագրության պայմանագրերի ճանաչումը կատարված կարգավորման ծախսի չափով: Հաշիվը դեբետագրվում է նաև ներկայացված, սակայն չկարգավորված պահուստի չափով՝ թղթակցելով 3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ» հաշվի հետ, պայմանագրերի դադարեցման դեպքում պարտավորության նվազման չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ:

3003 «Ապահովագրության պայմանագրերի գծով ձեռքբերման ծախսեր» հաշիվը նախատեսված է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով ձեռքբերման ծախսերի հաշվառման համար: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ 104 բաժնի ստացվելիք ապահովագրավճարների համապատասխան հաշվի հետ և դեբետագրվում 1020 կամ 1021 հաշվի հետ՝ մինչև ապահովագրության պայմանագրերի ճանաչումը կատարված ձեռքբերման ծախսի չափով: Հաշիվը դեբետագրվում է՝ թղթակցելով դրամական միջոցներ հաշվի հետ ձեռքբերման ծախսերի վճարման դեպքում կամ համապատասխան պարտավորությունների հաշիվների հետ:

3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվում արտացոլվում են դադարեցված պայմանագրերի գծով ապահովադիրների վերադարձման ենթակա գումարները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով 3000 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ ապահովագրավճարների բաշխման մեթոդով հաշվարկված» կամ 3001, 3002, 3003, 3005, 3006, 3007 հաշիվների հետ և դեբետագրվում է՝ թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ:

3005 «Պայմանագրի կատարման գծով այլ դրամական հոսքեր» հաշվում հաշվառվում են ՖՀՄՍ 17-ի Բ65 պարագրաֆում թվարկված այն դրամական հոսքերի գնահատված մեծությունները, որոնք չեն արտացոլվել 3001-3003 հաշիվներում:

3006 «Պայմանագրային ծառայությունների մարժա» հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է ապահովագրության պայմանագրերի գծով չվաստակած եկամուտը արտացոլելու համար: Հաշիվը դեբետագրվում է վաստակած եկամտի չափով՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշվի հետ և վերադարձվող ապահովագրավճարների չափով՝ թղթակցելով 3004 «Ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ» հաշվի հետ: Հաշիվը կրեդիտագրվում է պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների և պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի տարբերության չափով:

3007 «Ռիսկի ճշգրտում» հաշիվը օգտագործվում է ՖՀՄՍ 17-ով նկարագրված հիմնական մոտեցման կիրառման դեպքում: Նախատեսված է՝ ճշգրտելու ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումը՝ արտացոլելու փոխհատուցումը, որը ընկերությունը պահանջում է ոչ ֆինանսական ռիսկի հետևանքով առաջացած՝ դրամական հոսքերի գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը կրելու համար: Հաշիվը դեբետագրվում և կրեդիտագրվում է՝ թղթակցելով համապատասխանաբար 6080 և 7080 հաշիվների հետ:

Ենթաբաժին 301

«Համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունների հաշվառման համար: Հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ՝ 300 ենթաբաժնի հաշիվներին:

Ենթաբաժին 302

«Վերաապահովագրության մնացորդային ծածկույթի գծով պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրող ընկերությունների կողմից վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով պարտավորությունների հաշվառման համար:

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ՝ 300 ենթաբաժնի հաշիվներին:

Ենթաբաժին 303

«Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով վերաապահովագրական պարտավորությունների հաշվառման համար:

3030 «Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ՝ հաշվարկված ապահովագրավճարների բաշխման մեթոդով» հաշվում հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ՝ 1043-1045 հաշիվներին՝ հակառակ թղթակցումներով:

3031 «Փոխանցվելիք վերաապահովագրավճարներ վերաապահովագրողներին» հաշվում արտացոլվում է վերաապահովագրողին փոխանցվելիք վերաապահովագրավճարի մեծությունը՝ նվազեցված վերաապահովագրողների ստացվելիք պարգևավճարների մեծությամբ, հետևյալ ձևակերպումներով.

Դտ - 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ - 3031:

Ենթաբաժին 305

«Կրած պահանջներ ուղղակի ապահովագրության գծով»

Այս ենթաբաժնում արտացոլվում են կրած պահանջների գծով պարտավորությունները: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պարտավորության/պահուստի մեծությունը, իսկ դեբետում՝ դրա հակադարձումը, հատուցումների վճարումը:

3050 «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ» և **3051 «Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ»** կրեդիտագրվում է՝ թղթակցելով 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվների կամ համապատասխան ծախսային հաշիվների հետ:

Հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով 1030 հաշվի հետ:

Պահուստ հակադարձելիս, հատուցումների վճարման նպատակով պահուստից նվազեցում կատարելիս ձևակերպվում է.

Դտ- 3050 կամ 3051 (ճշգրտման չափով)

Կտ- 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվը (ճշգրտման չափով) կամ վճարվելիք հատուցումներ:

3052-3054 հաշիվները նախատեսված են վճարվելիք հատուցումները արտացոլելու համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են՝ թղթակցելով համապատասխան պահուստի հաշիվների հետ, իսկ դեբետագրվում են՝ թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ:

3055 «Հատուցումների գծով կանխավճարային գումարներ» հաշվում արտացոլվում են ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցման (ներառյալ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցման) համար վճարված գումարները (կանխավճարային գումարներ) այն դեպքում, երբ տվյալ ապահովագրական պատահարի հետ կապված հատուցումը բավարարելու կամ մերժելու որոշումը չի կայացվել: Հաշիվը պասիվային կարգավորող է:

Հաշիվը դեբետագրվում է՝ թղթակցելով դրամական միջոցների հետ և կրեդիտագրվում է՝ թղթակցելով 3050 կամ 3052-3054 համապատասխան հաշիվների հետ:

3056 «Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ». հաշիվը նախատեսված է վնասի պահանջի իրավունքի ստացման (սուբրոգացիայի) դեպքում ապահովագրական ընկերության կողմից այլ անձանց նկատմամբ ձեռք բերված պահանջների հաշվառման համար: Հաշիվը պասիվային կարգավորող է:

Պահանջների գծով ստացվելիք գումարով ձևակերպվում է.

Դտ- 3056

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Պահանջների գծով ստացված գումարների գծով ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ

Կտ- 3056:

Ենթաբաժին 306

«Կրած պահանջներ ուղիղ հատուցումների գծով»

3060 «Վճարվելիք գումարներ ապահովագրական ընկերություններին ուղիղ հատուցումների գծով» - հաշիվը կրեդիտագրվում է այլ ապահովագրական ընկերության կողմից տվյալ ապահովագրական ընկերության հատուցումների և կարգավորման ծախսերի գծով վճարում կատարելիս և դեբետագրվում է գումարների վերադարձման դեպքում, ինչպես նաև ճշգրտվում է վերջնահաշվարկի արդյունքում:

Ուղիղ հատուցումների գծով վճարած գումարով՝

Դտ-305 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-3060

Կարգավորման ծախսերի գծով վճարած գումարով՝

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ-3060

Վերջնահաշվարկի արդյունքում ճշգրտման գումարով՝

Դտ-3060

Կտ-6091

Կամ

Դտ-7091

Կտ-3060

Դրամական միջոցների վերադարձման դեպքում՝

Դտ- 3060

Կտ-Դրամական միջոցներ:

3061,3062,3063 հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների գծով ապահովագրություններին վճարվելիք գումարների հաշվառման համար:

Ուղիղ հատուցումների գծով վճարվելիք գումարների չափով ձևակերպվում է.

Դտ- 3064

Կտ- 3061 (3062, 3063)

Վճարելիս.

Դտ-3061 (3062, 3063)

Կտ- Դրամական միջոցներ:

3064 «Ստացվելիք գումարներ ապահովագրական ընկերություններից ուղիղ հատուցումների գծով» - պասիվային կարգավորող հաշիվ է, դեբետագրվում է ապահովագրություններին ուղիղ հատուցումների գծով վճարումների և կարգավորման ծախսերի իրականացման համար և կրեդիտագրվում է ապահովագրական ընկերություններից հետ ստացման դեպքում, ինչպես նաև ճշգրտվում է վերջնահաշվարկի արդյունքում:

Ուղիղ հատուցումների գծով վճարած գումարով և կարգավորման ծախսերի գծով՝

Դտ-3064

Կտ-3061(3062, 3063)

Վերջնահաշվարկի արդյունքում ճշգրտման գումարով՝

Դտ-3064

Կտ-6091

Կամ

Դտ-7091

Կտ-3064

Դրամական միջոցների հետ ստացման դեպքում՝

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ- 3064

Ենթաբաժին 307

«Կրած պահանջներ համաապահովագրության գծով»

Այս ենթաբաժնում արտացոլվում են համաապահովագրության գծով կրած պահանջները:

Հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ՝ ուղղակի ապահովագրության գծով կրած պահանջների՝ Ենթաբաժին 305-ի դեպքում:

Ենթաբաժին 308

«Կրած պահանջներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով»

Այս ենթաբաժնում արտացոլվում են վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով կրած պահանջները: Հաշիվների հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ ուղղակի ապահովագրության գծով կրած պահանջների՝ Ենթաբաժին 305-ի դեպքում:

ե. լրացնել «Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ» վեր- նագրով 31-րդ բաժնով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԲԱԺԻՆ 31

«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 310 «Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ», 311 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր, ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ», 312 «Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր»:

Ենթաբաժին 310

«Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բաղադրիչներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ՖՀՄՍ 17-ի համաձայն առանձնացված ներդրումային բաղադրիչը հաշվառելու համար: Ընդ որում, ներդրումային բաղադրիչի հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն:

3100 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով վճարվելիք գումարներ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրներին» - այս հաշվում արտացոլվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն ապահովագրական պայմանագրերից առանձնացված ներդրումային բաղադրիչը՝ հետևյալ ձևակերպումներով.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3100:

Ներդրումային բաղադրիչի մեծության ճշգրտման նպատակով 3100 հաշվում փոփոխությունները իրականացվում են՝ թղթակցելով դրամական միջոցների հետ՝ համապատասխանաբար ներդրումային բաղադրիչի գծով պարտավորության ավելացման կամ նվազման դեպքում.

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 3100

կամ

Դտ- 3100

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումային բաղադրիչի մեծության գծով պարտավորությունը նվազում է ավելի մեծ չափով, քան 3100 հաշվում առկա մնացորդը, ապա դեբետագրվում է 3100 հաշվում մնացած ողջ գումարը, և տարբերության չափով դեբետագրվում է 1100 հաշիվը.

Դտ- 3100 հաշվում առկա ողջ մնացորդի չափով

Դտ- 1100 նվազեցվող գումարի և 3100 հաշվի մնացորդի տարբերության չափով

Կտ- Դրամական միջոցներ:

Ապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի մեծության վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3100,

կամ

Դտ- 3100

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ՝

համապատասխանաբար ներդրումային բաղադրիչի իրական արժեքի ավելացման կամ նվազման դեպքում:

3101-3103 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 3100 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժին 311

«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր, ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի և ապահովագրության պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

3110 «Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրեր» - այս հաշիվը նախատեսված է այն ապահովագրական պայմանագրերի համար, որոնք պարունակում են ուղղակի մասնակցության հատկանիշներ՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի:

Ապահովագրական պայմանագրերի վերագնահատման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- համապատասխան ծախսային հաշիվ

Կտ- 3110,

կամ

Դտ- 3110

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ՝

համապատասխանաբար ապահովագրական պայմանագրի իրական արժեքի աճի կամ նվազման դեպքում:

3111, 3112, 3116 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 3110 հաշվի հաշվառումը:

3113 «Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր ապահովադիրների հետ կնքված ապահովագրության պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների առանձնացված հաշվառման համար՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի: Պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են համաձայն ՖՀՄՍ 9-ի:

3114, 3115, 3117 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 3113 հաշվի հաշվառումը:

3118 «Ապահովագրության պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքներ և ոչ ապահովագրական ծառայություններ» հաշիվը նախատեսված է ապահովագրական պայմանագրերում պարունակվող առանձնացվելի ապրանքների և ոչ ապահովագրական ծառայությունների գծով վճարվելիք գումարների արտացոլման համար համաձայն ՖՀՄՍ 17-ի: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 15-ի 7-րդ պարագրաֆի համաձայն:

3119 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3118 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժին 312

«Հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են հայեցողական մասնակցության հատկանիշներով ներդրումային պայմանագրերը: Հաշիվների հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 17-ի համաձայն:

»:

զ. 36-րդ բաժինը ուժը կորցրած ճանաչել,

է. 5406 ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5407 ենթակետ.

«5407 «Ապահովագրության, համաապահովագրության, վերաապահովագրության պայմանագրերի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ճշգրտման գծով օգուտներ և վնասներ» հաշիվը նախատեսված է ՖՀՄՍ 17-ով սահմանված հիմնական մոտեցման կիրառման դեպքում պայմանագրերի կատարման գծով դրամական հոսքերի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ճշգրտման հաշվառման համար:»,

ը. 60-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ 60

«Եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 600 «Եկամուտներ ուղղակի ապահովագրության գծով», 601 «Եկամուտներ համաապահովագրության գծով», 602 «Եկամուտներ վերաապահովագրության գծով», 603 «Եկամուտներ սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով», 604 «Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով», 605 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով եկամուտներ», 606 «Վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտներ», 607 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ», 608 «Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ, ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ», 609 «Այլ եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»:

Ենթաբաժին 600

«Եկամուտներ ուղղակի ապահովագրության գծով»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրողներից, համաապահովագրողներից, վերաապահովագրողներից, ապահովագրական միջնորդներից ստացվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է եկամուտների ավելացման դեպքում և դեբետագրվում է դրանց նվազման, ֆինանսական արդյունքներին վերագրման դեպքում:

6000 «Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներ» - այս հաշիվը նախատեսված է վաստակած ապահովագրավճարների հաշվառման համար:

Վաստակած ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ-104 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-6000

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում եկամուտները ֆինանսական արդյունքներին վերագրելիս.
Դտ-6000
Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ենթաբաժին 601
«Եկամուտներ համաապահովագրության գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության գծով եկամուտների հաշվապահական հաշվառման համար:

Վաստակած ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ 105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 301 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ 6010

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 6010

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ 105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/ 301 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ 6011

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 6011

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ենթաբաժին 602
«Եկամուտներ վերաապահովագրության գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով եկամուտների, պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք պարզևավճարների և հատուցումների գծով եկամուտների հաշվառման համար:

Ստացվելիք վերաապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ- 106 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/302 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ- 6020

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 6020

Կտ- 530:

Ստացվելիք պարզևավճարների վաստակած գումարով ձևակերպվում է.

Դտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/303 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ- 6021

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ- 6021

Կտ- 530:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ/303 ենթաբաժնի համապատասխան հաշիվ
Կտ 6022

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 602

Կտ-530:

Ենթաբաժին 603

«Եկամուտներ սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գծով եկամուտների հաշվառման համար:

Սուբրոգացիայի գծով առաջացած պահանջների գումարով ձևակերպվում է.

Դտ-305 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-6030

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-6030

Կտ-530:

Ենթաբաժին 604

«Եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրում պարունակվող ներդրումային բաղադրիչի դրական վերագնահատումից եկամուտների հաշվառման համար:

Դրական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-111 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-604:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-604

Կտ-530:

Ենթաբաժին 605

«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, դրանցում ներառված ածանցյալ գործիքների դրական վերագնահատումից եկամուտների հաշվառման համար:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի կամ նրանցում ներառված ածանցյալ գործիքների դրական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-111 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-605:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-605

Կտ-530:

Ենթաբաժին 606

«Վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրական ակտիվների ձևավորման գծով եկամուտների հաշվառման համար:

Արտացոլման ենթակա եկամտի գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 606 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 606 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 530:

Ենթաբաժին 608

«Ապահովագրության ծառայությունների գծով եկամուտներ, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտներ, ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության ծառայությունների գծով եկամուտները, անբարենպաստ պայմանագրերի հակադարձումից եկամուտները, ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները հաշվառելու համար:

Արտացոլման ենթակա գումարների չափով ձևակերպվում են

Դտ- 300-307/ 104-108 ենթաբաժինների համապատասխան հաշիվ,

Կտ- 608 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 608 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 530:

Ենթաբաժին 609

«Այլ եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում առաջացած եկամուտների, ինչպես նաև ապահովագրական գործունեության գծով այլ եկամուտների հաշվառման համար:

6091 «Եկամուտներ ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում» - այս հաշիվը նախատեսված է ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում եկամուտների հաշվարկման համար:

Վերջնահաշվարկի արդյունքների և ստացվելիք գումարների դրական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-3060

Կտ-6091

Վճարվելիք գումարների և վերջնահաշվարկի արդյունքների դրական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-3064

Կտ-6091:

Արտացոլման ենթակա եկամտի գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- համապատասխան պասիվային կարգավորող հաշիվ,

Կտ- 609 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-609 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-530:

թ. 64 «Եկամուտներ տեխնիկական պահուստների գծով» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ 64

«Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից»

Ենթաբաժին 640

«Եկամուտներ ապահովագրական պարտավորությունների հակադարձումից»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական պարտավորությունների/տեխնիկական պահուստների հակադարձումից եկամուտների հաշվառման համար:

6400 «Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից» - այս հաշվում հաշվառվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձման գումարը:

Մասնավորապես, չվաստակած ապահովագրավճարների պահուստը հակադարձելիս ձևակերպվում է.

Դո-չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Կո-6400:

6400 հաշվի մնացորդը եկամուտներին վերագրելիս ձևակերպվում է.

Դո-6400

Կո-530:

6401-6409 հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 6400 հաշվինը:»:

ժ. 70-71-րդ բաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ 70

«Ապահովագրության հետ կապված ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 700 «Ուղղակի ապահովագրության գծով ծախսեր», 701 «Համաապահովագրության գծով վճարվելիք գումարների գծով ծախսեր», 702 «Վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք գումարների գծով ծախսեր», 703 «Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք և փոխանցվելիք գումարների գծով ծախսեր», 704 «Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի, նրանց բաղադրիչների գծով կորուստներ», 705 «Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով կորուստներ», 706 «Վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսեր», 707 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր», 708 «Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր», 709 «Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարների գծով ծախսեր»:

Ենթաբաժին 700

«Ուղղակի ապահովագրության գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովադիրներին վճարվելիք հատուցումների, հետ վերադարձվող ապահովագրավճարների, ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների և ապահովագրության հետ կապված վճարվելիք այլ գումարների ծախսերի հաշվառման հետ:

Վճարվելիք կամ փոխանցվելիք գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 700

Կտ- 305

Ծախսերը ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ-530

Կտ-700:

Այս բաժնի 701-703 ենթաբաժինների հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 700 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 704

«Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի, նրանց բաղադրիչների գծով կորուստներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի բացասական վերագնահատումից կորուստների հաշվառման համար:

Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-704

Կտ-310:

Կորստի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530

Կտ-704:

Ապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի, ածանցյալ գործիքի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-704 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-310 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-704:

Ենթաբաժին 705

«Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերում ներառված ածանցյալ գործիքների գծով կորուստներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են Ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների բացասական վերագնահատումից կորուստների հաշվառման համար:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-705

Կտ-311:

Կորստի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530

Կտ-705:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերում պարունակվող ներդրումային բաղադրիչի, ածանցյալ գործիքի բացասական վերագնահատման գումարով ձևակերպվում է.

Դտ-705 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-311 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-705:

Ենթաբաժին 706

«Վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության վերաապահովագրական ակտիվների նվազեցման գծով ծախսերի հաշվառման համար:

Նվազեցվող գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 706 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 108 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ծախսի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ-706:

Ենթաբաժին 708

«Ապահովագրության ծառայությունների գծով ծախսեր, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստներ, Ապահովագրության և վերաապահովագրության գծով ֆինանսական ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության ծառայությունների գծով ծախսերը, անբարենպաստ պայմանագրերի գծով կորուստները, ապահովագրության գծով ֆինանսական ծախսերը հաշվառելու համար:

Արտացոլման ենթական գումարների չափով ձևակերպվում են

Դտ- 708 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-300-305 ենթաբաժինների համապատասխան հաշիվ/104-108 ենթաբաժնի հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ- 530,

Կտ-708 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ենթաբաժին 709

«Վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարների գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում առաջացած ծախսերի, ինչպես նաև ապահովագրական գործունեության գծով այլ ծախսերի հաշվառման համար:

7091 «Ծախսեր ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում» - այս հաշիվը նախատեսված է ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում ծախսերի հաշվարկման համար:

Վերջնահաշվարկի արդյունքների և ստացվելիք գումարների բացասական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-7091

Կտ-3064

Վճարվելիք գումարների և վերջնահաշվարկի արդյունքների բացասական տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ-7091

Կտ-3060:

ԲԱԺԻՆ 71

«Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր»

Ենթաբաժին 710

«Ապահովագրական պարտավորությունների ձևավորման հետ կապված ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական պարտավորությունների/տեխնիկական պահուստների ձևավորման հետ կապված ծախսերի հաշվառման համար: Հաշիվները դեբետագրվում են պարտավորությունների ձևավորման ժամանակ, կրեդիտագրվում են ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

Ձևավորվող պարտավորության գումարով ձևակերպվում է.

Դտ- 710

Կտ-300-305 ենթաբաժինների համապատասխան հաշիվ:

Պարտավորության ձևավորման ծախսերը ֆինանսական արդյունքին վերագրելիս.

Դտ- 530

Կտ-710:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ֆինանսների
նախարար Վահե Հովհաննիսյան
30 դեկտեմբերի 2022 թ., N 598-Ն**

**ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ Մարտին Գալստյան
27 դեկտեմբերի 2022 թ., N 243-Ն**

**Հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման
Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ
դնելու մասին***

Նպատակ ունենալով կազմակերպելու Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, 41-րդ և 42-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2023 թվականի հունվարի 23-ից շրջանառության մեջ դնել սույն որոշման Հավելվածով սահմանված նմուշի և նկարագրությամբ հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Հազար դրամ անվանական արժեքով 1999, 2001, 2011, 2015 և 2018 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 դեկտեմբերի 2022 թ., N 247-Ն

* Ոչ պաշտոնական հրապարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 27-ին (ՀՀԳՏ, 04.01. 2023):

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 247-Ն որոշման

**Հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության
թղթադրամի նմուշը**



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Հազար դրամ անվանական արժեքով 2022 թ. թողարկման Հայաստանի
Հանրապետության թղթադրամի**

1000 դրամ անվանական արժեքով 2022 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 130 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հուճքի վրա, որը երկու կողմից պոլիէթթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Պարոյր Սևակի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ: Թղթադրամի հիմնական գույնը մանուշակագույնն է:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խոր տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 1000 ՀԱՋԱՐ ԴՐԱՄ» կրկնվող բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Պարոյր Սևակի դիմանկարն է և «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «1000» և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԱԲ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է փետրագրչի պատկերն ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Պարոյր Սևակի դիմանկարի ֆոնին իր ձեռագրերից հատվածներ և զանգերի պատկերներ են: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՀԱՋԱՐ ԴՐԱՄ 1000», տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կարմիրից կանաչի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «1000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում, սև գույնով, տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ թափանցիկ պատուհան է՝ փետրագրչի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2022», ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին առկա են շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև՝ մանրատառաշարով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 1000 ՀԱՋԱՐ ԴՐԱՄ» կրկնվող բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում թափանցիկ պատուհան է՝ փետրագրչի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում Պարույր Սևակի տունն է՝ իր ծննդավայր Զանգակատուն գյուղի համապատկերին: Այս պատկերների մեջտեղում տպագրված է երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Պարույր Սևակի արձանի պատկերն է, որից աջ առկա են ուղղահայաց «1000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի ներքևի ձախ մասում օպտիկապես փոփոխական ներկով տպագրված է անվանական արժեքը թվերով՝ «1000», իսկ կենտրոնական մասում բառերով՝ «ՀԱՋԱՐ ԴՐԱՄ»:

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ
կատարելու մասին***

Նպատակ ունենալով կազմակերպելու հազար դրամ անվանական արժեքով 2022 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների շրջանառությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի, իսկ Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 23-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 դեկտեմբերի 2022 թ., N 248-Ն

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 27-ին (ՀՀԳՏ, 04.01. 2023):

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 248-Ն որոշման

«Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության,
հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում
գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները»
կանոնակարգ 9-ի

Թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ

Թղթադրամի վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցը տպագրվում է թղթի կամ թափանցիկ ժապավենի վրա՝ տվյալ անվանական արժեքի, տվյալ տարեթվի նմուշի թղթադրամի չափերով: Այն բաղկացած է 200 հավասարաչափ վանդակներից: Վնասված դրամանիշը տեղադրվում է ցանցի վրա և թղթի վրա տպագրված ցանցի դեպքում շուրջը գծվում է՝ կրկնելով թղթադրամի վնասված եզրագիծը, իսկ թափանցիկ ժապավենի վրա տպագրված ցանցի դեպքում ընդհանուր պատկերը լուսաձորվում կամ լուսանկարվում է: Շրջագծի երկարությամբ դասավորված վանդակների թվի կեսին ավելացվում է այդ շրջագծի ներսում ընկած վանդակների ընդհանուր քանակը, որից հետո ստացված արդյունքից հանվում է տասնորդական մասը: Դրամանիշը պետք է վճարունակ համարել այն դեպքում, երբ ստացված արդյունքը հավասար կամ մեծ է 120-ից:

Թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
1000 դրամ (2018 թ.)	130 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2022 թ.)	130 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
2000 դրամ (2018 թ.)	135 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
5000 դրամ (2009 թ.)	143 x 72		
5000 դրամ (2012 թ.)	143 x 72		
5000 դրամ (2018 թ.)	140 x 72		
10000 դրամ (2003 թ.)	150 x 72		
10000 դրամ (2006 թ.)	150 x 72		
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ(2018 թ.)	145 x72		
20000 դրամ (1999 թ)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
20000 դրամ (2021 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

»:

Հավելված 2

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 248-Ն որոշման**

«Հավելված 6

**«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության,
հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում
գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները»**

կանոնակարգ 9-ի

**Թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների
փաթեթաթղթերի չափերը**

Դրամանիշերն ըստ անվանական արժեքների	Վրադիրի և փաթեթաթղթի գույները	Լայնությունը (մմ)	Երկարությունը (մմ)	Մեկ գծի լայնությունը (մմ)	Գծերի քանակը (հատ)
10 դ.	դարչնագույն	45	220	4	1
25 դ.	կարմիր	45	220	4	1
50 դ.	կապույտ	45	230	4	1
100 դ.	դարչնագույն	45	230	4	2
200 դ.	կարմիր	45	240	4	2
500 դ.	կանաչ	45	240	4	2
1000 դ.	դարչնագույն	50	260	4	3
2000 դ.	դեղին	50	260	10	1
5000 դ.	սև	50	260	4	1
10000 դ.	կապույտ	57	290	10	2
20000 դ.	նարնջագույն	55	260	10	1
50000 դ.	մանուշակագույն	57	290	10	1
100000 դ.	կանաչ	57	260	10	1

Թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
1000 դրամ (2018 թ.)	130 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2022 թ.)	130 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
2000 դրամ (2018 թ.)	135 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
5000 դրամ (2009 թ.)	143 x 72		
5000 դրամ (2012 թ.)	143 x 72		
5000 դրամ (2018 թ.)	140 x 72		
10000 դրամ (2003 թ.)	150 x 72		
10000 դրամ (2006 թ.)	150 x 72		
10000 դրամ (2008 թ.)	150 x 72		
10000 դրամ (2012 թ.)	150 x 72		
10000 դրամ (2018 թ.)	145 x 72		
20000 դրամ (1999 թ.)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
20000 դրամ (2018 թ.)	150 x 72		
20000 դրամ (2021 թ.)	150 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
50000 դրամ (2018 թ.)	155 x 72		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի հունիսի 8-ի թիվ 293-Ն որոշման մեջ փոփոխություն
կատարելու մասին***

Նպատակ ունենալով համապատասխանեցնելու բանկերի կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելիս հաճախորդին տրամադրվող անդորրագրի վրա առկա տեղեկատվությունը մասնագիտացված այլ անձանց կողմից տրամադրվող անդորրագրի վրա առկա տեղեկատվությանը,

հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի ««Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման կարգը» հաստատելու մասին» թիվ 293-Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման» կարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն կարգի 4-րդ կետի «ժբ», «ժգ» և «ժդ» ենթակետերով սահմանված տեղեկատվության առկայությունը անդորրագրերի վրա պարտադիր է մեկ հարյուր հազար դրամ գումարը գերազանցող առք ու վաճառքի գործառնությունների համար: Ընդ որում, սույն կարգի 4-րդ կետի «ժդ» ենթակետի պահանջը կհամարվի բավարարված նաև այն դեպքում, եթե բացակայում է անդորրագրի ձևաթերթիկի «հաճախորդի ստորագրություն» դաշտը, սակայն անդորրագրի վրա առկա է հաճախորդի ստորագրությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 դեկտեմբերի 2022 թ., N 249-Ն

* Ոչ պաշտոնական հրապարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 27-ին (ՀՀԳՏ, 05.01. 2023):

«Անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակը որպես ներդրումային ֆոնդի նպատակ գնահատելու չափանիշները» կանոնակարգ 10/33-ը սահմանելու մասին*

Նպատակ ունենալով խթանելու ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի ոլորտի զարգացումը՝ հստակեցնելով անձի (ակտիվների համախմբի) ստեղծումը կամ գործունեությունը որպես ներդրումային ֆոնդ որակելու չափանիշները և հնարավորություն տալով բացառապես այդ չափանիշներին բավարարող անձանց հանդես գալու որպես ներդրումային ֆոնդ,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակը որպես ներդրումային ֆոնդի նպատակ գնահատելու չափանիշները» կանոնակարգ 10/33-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
16 հունվարի 2023 թ., N 4-Ն

* Ոչ պաշտոնական հրապարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. հունվարի 10-ին (ՀՀԳՏ, 20.01.2022):

**«ԱՆՁԻ (ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲԻ) ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՐՊԵՍ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆՊԱՏԱԿ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/33-Ը
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակը որպես ներդրումային ֆոնդի նպատակ գնահատելու չափանիշները:

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

- 1) Ներդրումային ֆոնդ՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության,
- 2) Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
- 3) Ապրանք՝ ցանկացած ակտիվ, բացառությամբ ֆինանսական գործիքի,
- 4) Ֆինանսական գործիք՝ ըստ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 32-ով կիրառվող նշանակության,
- 5) Վարձակալական վճար՝ ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում կիրառվող նշանակության:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

**ԳԼՈՒԽ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ (ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ) ՆՊԱՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

4. Անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակը չի համապատասխանում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ֆոնդի նպատակին, եթե անձը (ակտիվների համախմբը) բավարարում է ստորև նշված չափանիշներից առնվազն մեկին.

- 1) իրականացնում է այնպիսի գործունեություն, որը բնորոշ չէ ներդրումային ֆոնդի կողմից իրականացվող կոլեկտիվ (հավաքական) ներդրումային գործունեությանը, այդ թվում՝ եթե իրականացնում է հետևյալ գործունեության տեսակներից որևէ մեկը.
 - ա. ապրանքների արտադրություն, առք, վաճառք և/կամ փոխանակում.
 - բ. շենքերի կամ շինությունների կառուցում (կառուցապատում).
 - գ. աշխատանքների կատարում և/կամ ոչ ֆինանսական ծառայությունների մատուցում,
- 2) չունի սահմանված ներդրումային քաղաքականություն, որի համաձայն պետք է իրականացվի դրա կառավարումը:

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետի առաջին ենթակետը չի ներառում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված անշարժ գույքի ֆոնդերին բնորոշ գործունեությունը: Ընդ որում, գործունեությունը չի համարվում անշարժ գույքի ֆոնդին բնորոշ, եթե.

- 1) անշարժ գույքում ներդրումն իրականացվում է շուկայական արժեքի փոփոխությունից և/կամ վարձակալական վճարներից օգուտներ ստանալուց տարբեր այլ նպատակով.
- 2) ներդրում է իրականացվում այնպիսի անշարժ գույքում (շենքերում, շինություններում), որի շինարարությունը (կառուցումը) դեռևս ավարտված չէ.
- 3) ձեռք բերված շենքերի, շինությունների վերականգնման, արդիականացման, բարեկարգման և նմանատիպ այլ գործառնություններն իրականացվում են անձի կամ անձի (ակտիվների համախմբի) կառավարումն իրականացնող անձի կողմից ուղղակիորեն:

6. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի իմաստով ներդրումային քաղաքականությունը համարվում է սահմանված, եթե առնվազն նկարագրում է.

- 1) ակտիվների տեսակները, դրանցում ներդրումների նվազագույն և/կամ առավելագույն սահմանաչափերը,
- 2) կիրառվող կոնկրետ ներդրումային ռազմավարությունները,
- 3) լսերիջի կիրառման նպատակը և սահմանափակումները, եթե նախատեսվում է լսերիջի կիրառում:

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 103-Ն որոշման մեջ լրացում կատարելու
մասին***

Նպատակ ունենալով սահմանելու ապահովագրական սակագների հաշվարկման լավագույն սկզբունքները, նպաստելու ապահովագրական ընկերությունների կողմից սեփական վիճակագրության հավաքագրմանը, բարձրացնելու ապահովագրական ընկերությունների կողմից վարվող վերլուծական գործընթացների արդյունավետությունը և ապահովագրական ընկերություններում սակագնային քաղաքականության նկատմամբ սահմանված ներքին հսկողության պահանջների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը և 153-րդ հոդվածը,

դեկլարավելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի ««Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 163-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 103-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/10) կատարել հետևյալ լրացումը.

1) Կանոնակարգ 3/10-ը 37-րդ կետի 3-րդ ենթակետի «իրականացման կարգը,» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով՝
«ընդ որում՝

ա. Ապահովագրական սակագների հաշվարկն առնվազն բավարարում է հետևյալ սկզբունքներին՝

ա1. Ապահովագրական սակագինը հաշվարկվում է Ընկերության կողմից ապահովագրության դասերի ներքո սահմանվող համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերի յուրաքանչյուր խմբի համար: Ընկերությունը սահմանում է նաև ապահովագրական պայմանագրերի՝ համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերի խմբերի տարանջատման մեթոդաբանությունը,

ա2. Համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող յուրաքանչյուր խմբի գծով հաշվարկված ապահովագրական սակագնի համար Ընկերությունը բացահայտում է այն ձևավորող բոլոր տարրերը (այդ թվում՝ այն ռիսկային գործոնները, որոնք ազդեցություն ունեն ապահովագրական սակագնի վրա, դրանց համապատասխան ռիսկային գործակիցները, բեռնվածության տարրերը՝ առնվազն միջնորդավճարի, շահույթի, կարգավորման ծախսերի չափերը),

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. հունվարի 10-ին (ՀՀԳՏ, 20.01. 2023):

- ա3. Ապահովագրական սակագինը արտացոլում է ապագայում սպասվող ծախսերի արժեքը, այդ թվում՝ ապահովագրական ռիսկը ստանձնելու հետ կապված բոլոր ծախսերը,
- ա4. Ապահովագրական սակագնում ներառված են յուրաքանչյուր ապահովադրի (ապահովագրված անձի) նկատմամբ ապահովագրական ռիսկը ստանձնելու հետ կապված բոլոր ծախսերը: Երբ անհատական ռիսկի փորձառությունը թույլ չի տալիս հաշվարկել այս ծախսերը, միանման ռիսկերը ագրեգացվում են,
- ա5. Վերաապահովագրողի կողմից տրամադրված սակագնի կիրառման դեպքում ապահովագրական ընկերությունը հիմնավորում է ապահովագրական սակագինը հաշվարկելու համար բավարար վիճակագրության (այդ թվում՝ ՀՀ ապահովագրական համակարգի վերաբերյալ վիճակագրություն) բացակայությունը,
- ա6. Ապահովագրական սակագինը գերազնահատված կամ թերազնահատված չէ և խտրական չէ միևնույն ռիսկայնություն ունեցող ապահովադիրների (ապահովագրված անձանց) համար,
- բ. Ապահովագրական սակագների հաշվարկման գործընթացում առնվազն հաշվի են առնվում.
- բ1. Ապահովագրության կանոնները, պայմանագրային առանձնահատկությունները, ապահովագրական սակագների գնահատման գործընթացում կանոնները էական համարելու չափանիշները,
- բ2. Անդերոայթինգի իրականացման ուղեցույցները, որոնք իրենց մեջ ներառում են ռիսկը ստանձնելու կամ չստանձնելու չափանիշները, բռնուսների և զեղչերի տրամադրման քաղաքականությունը,
- բ3. Ռիսկերի դասակարգման ծրագիրը, որը թույլ է տալիս խմբավորել հոմոգեն ռիսկերը կամ տարանջատել ռիսկային գործոնները, որոնք նպաստում են ապահովագրական սակագինը առավել ճշգրիտ գնահատելուն,
- բ4. Ապահովագրական սակագների կիրառման ալգորիթմները, որոնք սահմանում են ռիսկային գործոնների առաջնահերթությունը, ռիսկային գործակցի ազդեցությունը սակագնի հաշվարկում, ինչպես նաև սահմանում են ռիսկային գործոնների փոփոխությունը էական համարելու չափանիշները,
- բ5. Արժանահավատ ժամանակային շարքերը, որոնք բնութագրում են ծախսերի, պատահարների տեղի ունենալու հաճախականության և ապահովագրական սակագների, ինչպես նաև այլ ցուցանիշների անցյալում հավաքագրված տվյալները և ապագայի միտումները,
- բ6. Տվյալների ժամանակահատվածի ընտրությունը՝ կախված տվյալների արժանահավատությունից, հասանելիությունից, ապահովագրական ծածկույթից և այլ գործոններից,
- բ7. Տվյալների արժանահավատությունը. հոմոգեն ռիսկերի խմբավորման մեջ ներառված տվյալների ծավալը պետք է լինի բավարար, որպեսզի վիճակագրորեն լինի վստահելի,
- բ8. Վերաապահովագրության ծրագիրը,
- բ9. Ապահովագրական սակագների գնահատման վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունը, վիճակագրությունը, ինչպես նաև վերլուծական նյութերը (առկայության դեպքում),
- բ10. Հայտերի կարգավորման դինամիկան,
- բ11. Նախկինում տեղի ունեցած ծայրահեղ մեծ վնասների (օրինակ՝ աղետների արդյունքում կրած վնասներ) ազդեցությունը, ընկերության ռիսկի ախորժակը ծայրահեղ մեծ վնասներ առաջացնող ռիսկերի նկատմամբ,
- բ12. Ընկերության գործընթացների փոփոխությունները,
- բ13. Հնարավոր շեղումները՝ կապված սպասվող ծախսերի հավանական փոփոխությունների, ինչպես նաև համակարգային փոփոխությունների հետ,

բ14. Ներդրումները և այլ տոկոսային եկամուտները,

բ15. Այլ ազդեցությունները (արտաքին փոփոխություններ՝ օրենսդրական և այլն),

բ16. Այլ ակտուարական դատողություններ, որոնք անհրաժեշտ են սակագների հիմնավորման համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

16 հունվարի 2023 թ., N 5-Ն

***Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին
(2022 թվականի չորրորդ եռամսյակ)****

Նպատակ ունենալով ապահովելու ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով: Սահմանված դրույքաչափը ուժի մեջ է (պարտադիր է կատարման) 2023 թվականի օգոստոսի 1-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
26 հունվարի 2023 թ., N 6-Ն***

* Ոչ պաշտոնական հրապարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. հունվարի 24-ին (ՀՀԳՏ, 31.01.2022):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2023)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (<http://www.armstat.am>), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
<http://www.cba.am>


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ	53
<i>Մակրոտնտեսական ցուցանիշներ</i>	
<i>Գնաճ</i>	
<i>Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին</i>	
<i>Բնականոն գնաճ</i>	
<i>Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները</i>	
Արտաքին հատվածի ցուցանիշներ	57
<i>Ապրանքների արտահանում և ներմուծում</i>	
<i>Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները</i>	
<i>Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք</i>	
<i>Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը</i>	
<i>ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը</i>	
Պետական բյուջեի ցուցանիշներ	62
<i>Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները</i>	
Դրամավարկային ցուցանիշներ	63
<i>Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ</i>	
<i>Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ</i>	
<i>ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ</i>	
<i>Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում</i>	
Ֆինանսական շուկա	74
<i>Տոկոսադրույքներ</i>	
<i>Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը</i>	
<i>ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ</i>	
<i>Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը</i>	
<i>Ռեպո շուկայի շրջանառությունը</i>	
